**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 փետրվարի 2015 թվականի**

**«Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) խորհրդի հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին» հարցի մասին**

Լսելով և քննարկելով **«Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) խորհրդի հաշվետվությունը կատարված աշխատանքների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսանողական գիտական ընկերության խորհրդի նախագահ, տնտեսագիտության թեկնածու Վ.Գ.Գևորգյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է՝ անցած մեկ տարվա ընթացքում ուսանողական գիտական ընկերությունն արդյունավետորեն կատարել է իր գործառույթները:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է ՈՒԳԸ 36-րդ նստաշրջանի առաջին փուլը, որն անցկացվել է 2013 թվականի դեկտեմբերին, մասնակցել է 92 ուսանող (նախորդ տարի՝ 78): 2014 թ. մարտին կատարվել են նստաշրջանի երկրորդ փուլի նախապատրաստական աշխատանքները. զեկույցները տրվել են գրախոսման, զեկուցման ենթակա է եղել 40 աշխատանք, սակայն երկրորդ փուլը տեղի չի ունեցել:

Համալսարանի ուսանողները մասնակցել են նաև այլ բուհերի կազմակերպած գիտաժողովների, կլոր սեղանների, բանավեճերի և մրցույթների:

Գիտական խորհուրդը, միաժամանակ, նշում է, որ ՈՒԳԸ նպատակների լիարժեք իրագործման համար կատարվող աշխատանքները դեռևս բարելավման կարիք ունեն:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **ՈՒԳԸ աշխատանքները գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝**
   1) ամբիոնների նիստերում հաստատել ՈՒԳԸ տարեկան աշխատանքների թեմաների ուղղությունները.
   2) նշանակել ամբիոնային ՈՒԳԸ պատասխանատուներ և գիտական ղեկավարներ ամբիոնների փորձառու դասախոսներից:

3. **Հանձնարարել դեկաններին՝**
   1) քննարկել և մշտապես վերահսկել ՈՒԳԸ աշխատանքները ֆակուլ-տետներում և ամբիոններում.
   2) ասպիրանտուրայի ընդունելության գործընթացում կարևորել մասնակցությունը ՈՒԳԸ նստաշրջաններին՝ որպես պարտադիր գործոն:

4. **Հանձնարարել ՈՒԳԸ խորհրդին՝**
   1) հրատակության ներկայացնել ՈՒԳԸ տարեկան նստաշրջանի լավագույն զեկույցները.
   2) մշակել և ներկայացնել ուսանողներին ՈՒԳԸ աշխատանքներով զբաղվելու խթանման ծրագրեր.
   3) ներկայացնել ՈՒԳԸ կանոնադրության փոփոխության նախագիծ.
   4) հաստատել գիտական կապեր ՀՊՏՀ-ի հետ համագործակցող բուհերի ՈՒԳԸ-ների հետ:

5. **Որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել գիտության բաժնի պետ Խ.Ա.Մխիթարյանին:**

**Գիտական խորհրդի նախագահ** **Կ. Լ. Աթոյան**

**27.02.2015 թ.**

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ